



ԱԶԳԱՅԻՆ ՔԱՐԷՆ ԵՓՓԷ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՇԿԵՐՏՆԵՐԸ ԿՐ ԳԻՆԸ ԱՆՆԱՀԱՆՁ ԵՐԹ

Անցնող տարին դժբախտ տարի մըն էր, հարազատներ կորսնցուցի հիւանդութեան պատճառով: Այդքանը բաւարար չէր կարծես, վրայ հասաւ Արցախի պատերազմը, որ ո՛չ միայն բազմաթիւ նահատակներ խլեց, այլ՝ մեր հայրենի հողամասը կորսնցուցինք: Աշխարհի չորս ծագերէն համայն հայութիւնը փութաց հայրենիքի օգնութեան, նիւթապէս օգտակար դառնալով՝ բարոյապէս խրախուսելով: Սակայն թշնամին հզօր էր եւ մենք պատրաստ չէինք այդ քաղաքական սադրանքներուն դէմ դնելու:

Պատմութեան ընթացքին բազմաթիւ կորուստներ ունեցած ենք: Հարկ է դասեր քաղել անոնցմէ եւ ջուսահատիլ: Հայու անվեհեր հոգին պարտութիւն չի ճանչնար:

Մեր հազարաւոր անվեհեր նահատակներուն կանչը անտեսելու իրաւունք չունինք: Միանալով, մէկ բռունցք դառնալով կրնանք մեր իրաւունքներուն վերստին տիրանալ:

Վերյիշելով բանաստեղծ Ժագ Յակոբեանի խօսքերը, կը կրկնեմ. Աննահանջ երթ, երթը հայուն, Դեպի բացը նոր դարերուն, Աննահանջ երթ դրօշակի: Աննահանջ երգ երգը հայուն, Դեպի բացը նոր ծովերուն, Աննահանջ երգ աշխատանքի, Բաջ հաւատքի, յաղթանակի:

Մեղրի Եագուպեան
Թ. կարգ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻԻ ՏԱՂԱՆԻՆ ՈՒ ՍՐԱՄՏՈՒԹԻՒՆԸ

Կը պատմուի, որ Յովհաննէս Այվազովսկի երբ դիմում ներկայացուցած է ուսումնարան ընդունուելու, ուսումնարանի տնօրէնը ստուգելու համար Այվազովսկիի տաղանդը, կ'ըսէ.

-Ուսումնարանի առաջին յարկին վրայ աւազան մը կայ, գնա՛ եւ դոյլով ջուր բե՛ր:

Այվազովսկին կ'երթայ, կը տեսնէ, որ իրականութեան մէջ այդ աւազանը պատին վրայ գծուած պատկեր մըն է եւ ո՛չ թէ իսկական աւազան:

Ան այդ «ջուրին» մէջ խեղդուող շուն մը կը գծէ եւ անշուշտ առանց ջուրի կը վերադառնայ, իսկ երբ տնօրէնը կը հարցնէ, թէ ինչո՞ւ դատարկաձեռն վերադարձաւ, Այվազովսկի համոզիչ շեշտով մը կը պատասխանէ.

-Աւազանին մէջ սատկած շուն մը կար, ջուրը աղտոտած էր, չկըրցայ բերել:

Տնօրէնը ապշահար կ'երթայ ստուգելու: Կը տեսնէ, թէ աւազանին մէջ հմտօրէն խեղդուած շուն մը գծուած է: Կը ժպտայ ու առանց այլեւայլի, սրամիտ ու տաղանդաւոր Այվազովսկին ուսումնարան կ'ընդունի:



ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՌԻԹԱ ԿԱՐԵԱՆ-ՏԻՊՈՒԹԵԱՆ
ՆԿԱՐԱԶԱՐՈՒՅՑ՝ ՌԱՅՅԻ ԲԵՇԻՇԵԱՆ

ՌՎ Է ԾՈՎԱՆԿԱՐԻՉԸ

Կարգ մը նկարիչներ կը սիրեն դիմանկարներ գծել, ուրիշներ՝ բնապատկերներ եւ կամ նաթիւրմորթեր: Այն նկարիչները, որոնք իրենց ստեղծագործութեան սիւթը կ'ընտրեն շուրջ՝ լիճերը, գետերը, ովկիանոսները, ծովերը մարինիստներ կը կոչուին, այսինքն՝ ծովանկարիչներ, «մարինուս» լատիներէն բառ է եւկը նշանակէ ծովային: Իսկ ծովային տեսարաններուն նուիրուած գեղանկարչական արուեստի ժանրը «մարինիստիկան» կամ «մարինան» է, այսինքն՝ ծովանկարչութիւն: Սկզբնական շրջանին ծովանկարիչները իրենց կտաւներուն վրայ կը պատկերացնէին պատմական ծովամարտերու տեսարաններ կամ պատերազմներու ընթացքին համբաւ ունեցած մարտանաւեր: Սակայն ժամանակի ընթացքին ծովանկարիչներուն սկսաւ հետաքրքրել նոյնինքն՝ ծովը, իր գեղեցիկ եւ փոփոխական բնոյթով, ո՛չ թէ պատերազմէն յաղթական վերադարձած նաւերը:

Նշանաւոր հայ ծովանկարիչ է Յովհաննէս Այվազովսկին: Անոր «Իններորդ ալիքը» հանրայայտ նկարին մէջ պատկերացուած է մրրկայոյզ ծովը, որուն դիմաց ամեն մարդ անգոր է:



ԽԱՂԵՐ

Կրնա՞ս գտնել պատկերին մէջ գոյութիւն ունեցող անբնական մանրամասնութիւնները:



Փորձէ՛ գտնել երկու պատկերներուն միջեւ գոյութիւն ունեցող ութ տարբերութիւնները:

ԱՇԽԱՏԱՍԷՐ ՁԵՌՔԵՐՆ ՈՒ ԾՈՅԼՈՍԿՈՐԸ



«Ինչո՞ւ դուն այլ չես երթար ծեր մարդուն քով, անոր տունը մաքրելու» հարց տուաւ մեծ մայրը: «Լաւ աշխատիր եւ թերեւս դուն այլ ասի մը արծաթ դրամ կը շահիս»: Ուստի, Ծոյլոսկորը ջրհոր գնաց, պարանը բռնեց եւ յատակը իջաւ:

Ան փուռ մը տեսաւ, որուն մէջ ճայ մը կար: «Ով որ գիս հանէ, կրնայ գիս հետը տանիլ» կ'ըսէր ճայը: Ծոյլոսկորը պատասխանեց. «Ես չեմ հաներ: Կը յոգնիմ: Դուն քեզի դուրս ցատկէ փումէն՝ եթէ կ'ուզես հետս գալ»:

Ան գնաց, եւ պարտեզի մը մէջ դեղին խնձորներ տեսաւ ծառին վրայ: Անոնք խնդրեցին որ գիրենք ճիւղերէն վար բերէ. Ան ըսաւ. «Չեմ ցնցեր ճիւղերը: Ատիկա գիս կը յոգնեցնէ»: Եւ շարունակեց ճամբան:

Ան հասաւ Ձմեռ Պապուկին տունը եւ ըսաւ. «Եկայ քեզի օգնելու եւ գործիս փոխարէն բան մը շահելու»: Ձմեռ Պապուկը ըսաւ. «Գնա՛ եւ անկողինս թոթուէ, յետոյ ճաշ եփէ եւ սաւաններս կարկտէ»:

«Ինքզինքս պիտի չոգնեցնեմ, մատներս պիտի չսառեցնեմ» ըսաւ Ծոյլոսկորը ինքնիրեն: Ուստի ծերուկ մարդը կարծր անկողինի վրայ քնացաւ:

Ծոյլոսկորը խոհանոց գնաց, բայց հոն ի՞նչ գիտեր: Ան բանջարեղէնները կեղուեց, միսն ու ձուկը կտրտեց եւ ամէն ինչ, առանց լուալու, նետեց կաթսային մէջ: «Ինչո՞ւ յոգնիմ եւ զատ զատ եփեմ: Արդէն իր ստամոքսին մէջ բոլորը միասին պիտի խառնուին» մտածեց:

Ձմեռ Պապուկը արթնցաւ եւ խնդրեց որ ընթրիքը բերուի: Ան համին նայեցաւ եւ երբ աւագի հատիկներ եկան ակռաներուն տակ՝ դէմքը խոժոռեցաւ: Ան խոհանոց մտաւ համով ընթրիք պատրաստելու: Այնքան համով էր, որ Ծոյլոսկորը իր մատներն այլ լզեց:

Ընթրիքէն ետք Ձմեռ Պապուկը հանգչեցաւ եւ Ծոյլոսկորը ասեղ մը առնելով փորձեց կարել: Անփորձ ըլլալով, իր մատը վիրաւորեց եւ կարելէ հրաժարեցաւ: Ծերուկը այս եւս չնկատել ձեւացուց, եւ ի՛նք աղջիկը անկողին դրաւ: «Ազնիւ ծերուկ մըն է», - մտածեց Ծոյլոսկորը, «եւ ինձի արծաթէ դրամ պիտի տայ հարկաւ»:

Երրորդ օրը ան խնդրեց Ձմեռ Պապուկէն որ զինք տուն դրկէ՝ իր գործին փոխարէնը հատուցանելով: «Հատուցումը պիտի ըլլայ կատարած գործիդ համեմատ» ըսելով, ծեր մարդը մեծ արծաթեայ մանեակ մը դրաւ անոր մէկ ձեռքին մէջ, եւ մեծ աղամանդ մը՝ միւսին մէջ:

Երբ Ծոյլոսկորը տուն հասաւ, սկսաւ պարծենալ. «Զրոջմես աւելի բան շահեցայ: Տեսէ՞ք ինչ բերի»: Յանկարծ մանեակը սկսաւ հալիլ: Ան գետին հոսեցաւ, որովհետեւ ձիւնի փաթիլ էր: Յետոյ՝ աղամանըը սկսաւ հալիլ, որովհետեւ այդ եւս սառնոյցի կտոր մըն էր:



ՎԵՐՁ

ԵՐԿԻՐՆԵՐ ԵՒ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐ ՀՆԴԿԱՍՏԱՆ

Հնդկաստանը թերակղզի մըն է. ունի հսկայ տարածութիւն՝ մօտաւորապէս 6,3 միլիոն քառակուսի քմ., որու վրայ կ'ապրին 915 միլիոն ժողովուրդ՝ որուն մեծամասնութիւնը՝ գիւղացիներ են: Ունի նշանաւոր քաղաքներ Նիւ Ելիի՝ մայրաքաղաքը, Մատրաս, Պոմպէյ եւ Բալքոն, որ 1911 թուականէն առաջ Հնդկաստանի մայրաքաղաքն էր:

Ժողովուրդին մեծամասնութիւնը կը կրէ երկրին տկար տնտեսական վիճակի հետեւանքները: Երբ անձրեւը քիչ ըլլայ, այդ տարուան բերքը դիւրաւ կը փճանայ եւ մասամբ սով կը տիրէ: Ժողովուրդին մէկ մասը օրապահիկը կը շահի ձկնորսութեամբ եւ բնական արտադրութեամբ:

Հնդկաստանի ժողովուրդը բաժնուած է տարբեր կրօնական խումբերու: Ժողովուրդին 83 առ հարիւրը կը հետեւի հինտուիզմի, 11 առ հարիւրը՝ իսլամութեան, 3 առ հարիւրը՝ քրիստոնէութեան: Ասոնց կողքին կան սիխեր, հրեաներ եւ պոլտոսիստներ:

Այս երկրին մէջ կրօնքը շատ մեծ դեր կը խաղայ ժողովուրդին մտածելակերպը եւ վարքը առաջնորդելու մէջ: Այս իրողութիւնը յաճախ ժխտական անդրադարձներ ունեցած է ժողովուրդին ներքին եւ արտաքին փոխ յարաբերութիւններու վրայ:

1947 թուականին, Բ. Աշխարհամարտէն ետք, Հնդկաստանի Հինտու եւ իսլամ ժողովուրդները, արիւնալի բախումներէ ետք, կ'որոշէն երկու անկախ պետութիւններ հիմնել. Այսպէս՝ Հնդկաստանի եւ Փաքիստանի պետութիւնները կը ստեղծուին:

1984 թուականին, սիխերու եւ հինտոսներու միջեւ եղած հակառակութիւններուն զոհ կ'երթայ օրուան վարչապետուհին՝ Ինտիրա Կանտի: Ան կ'ահաբեկուի իր երկու սիխ պահակներուն կողմէ:

Անոր յաջորդը եւ գաւակը՝ ՌաճիՖ Կանտի նոյնպէս կ'ահաբեկուի 1991-ին, դէպք մը, որ պատճառ կը դառնայ հինտու-սիխ լարուածութեան սրուելուն:

Իսլամներու եւ հինտուներու միջեւ լարուածութիւն մը յառաջացաւ երբ հինտուները, Այոտիա քաղաքին մէջ մզկիթ մը քանդեցին, այն պատճառով որ հինտուները այն տեղը կը նկատեն իրենց համար սուրբ վայր մը, ուր իրենց մեծագոյն աստուածներէն Ռաման ծնած է:

Հնդկաստանը թէեւ գիտական աշխարհի մէջ զարգացում արձանագրած է, մանաւանդ բժշկական մարզին մէջ, սակայն կարգ մը հարցեր կը մտահոգեն երկրին իշխանութիւնը: Օրէ օր կ'աւելնայ տնանկներուն եւ աղքատներուն թիւը ժողովուրդի արագ աճը կասեցնելու նպատակով, իւրաքանչիւր ընտանիքի համար գաւակ ունենալու թիւը սահմանափակուած է:

Հակառակ այս բոլորին, Հնդկաստան այսօր ճարտարաբուհետի մէջ աշխարհի զարգացած երկիրներէն մէկն է:

Հնդկաստան նաեւ զարգացած երկիր է մշակութային մարզերու մէջ: Ինչպէս ֆիլմարուեստի, երաժշտութեան եւ գրականութեան մէջ:

